ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Յունիսի 2-ին Սինոդը որոշեց դատ բանալ Բլնի գիւղի կապալառու Սոփիա Գեղամեանի դէմ նրա վրայ մնացած 2905 ր. հեռացնելով նրան վարձակալութիւնից, և հրամայեց Երևանի Կոնսիստորիային աճուրդ նշանակել այդ կալուածքի համար։

Յունիսի 5-ին Սինոդը որոշեց լուծել Արդուին գաւառի Օքրօպակերտ գիւղացի Գրիգոր Տէր Զաքարեանի պսակը Սիրանոյշ Մովսիսեանի հետ և թոյլ տալ միայն մարդուն կրկին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Տփխիսեցի Եւա Պապովեանցի պսակը Արտեմ Պապովեանցի հետ վերջնիս անյայտ բացակայութեան պատճառով, և թոյլ տալ կնոջը վերստին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց ուղարկել Մայր Աթոռի միաբան Իսահակ սարկաւագ Տէր Ղազարեանցին, որն ուսանում է Բերլինում, իւր միաբանական ռոճիկը՝ ամսական 20 ռուբլի, մինչև 1908 թուի յունուարի 1-ը։

Յունիսի 7-ին Սինոդը որոշեց մի տարի ժամանակ Իգդիր աւանի քահանայ Տէր Մեսրոպ Շաւարշեանին իւր գործակալութեան ժամանակ վատնած 705 ր. 34 կ. վիճակային արդիւնքը վճարելու համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Վարվառէ Սարգսեան Սարուխան բէկ-ի պսակը Վաղարշակ Համբարձումեան Սարուխան բէկ-ի հետ և թոյլ տալ կնոջը կրկին

ամուսնանալու, յայտնելով վճիռը Աստրախանի Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը որոշեց մերժել Տ. Մեսրոպ վարդապետի խնդիրը իրեն առաջնորդական կամ յաջորդական ռոճիկ տալու մասին անցած մի ու կէս տարուայ համար, որովհետև Սինոդին անյայտ է եղել թէ ինչ յանձնարարութիւններով և ինչ պաշտօնով է մնացել նա վիճակներում՝ և որքան նպաստ է ստացել այլ տեղերից. սակայն ի նկատի առնելով նրա հիւանդագին վիճակը, Սինոդը վճռեց տալ Տ. Մեսրոպ վարդապետին միայն 400 ռուբլի ի նպաստ բժշկութեան, մանաւանդ որ նա ստացել է Մայր Աթոռի գանձարանից իւր բոլոր ռոճիկները բացակայած ժամանակի համար՝ նորին Վեհափառութիւնից հաստատուած նախահաշուի համաձայն։

Նոյն թուին Սինոդը որոշեց տալ վանական Կառավարութեանը արտաքոյ նախահաշուի 1305 ռուբլի Մայր Աթոռի հիւրատան նորոգութեան համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց թոյլատրել Շամախու Կոնսիստորիային գնել եղբ. Թառայեանների տունը ի պէտս Առաջնորդարանի և Կոնսիստորիայի 7000 ռուբլի դրամը թեմի եկեղեցիների դրամագլուխներից։

Նոյն թուին Սինոդը որոշեց տալ վան. Կառավարութեան նախահաշուի 850 ռ. «վերին» կոչուած Ջրաղացի նորոգութեան համար։

Յունիսի 8-ին Սինոդը որոշեց լուծել Եկատերինոդարցի Սահակիանիա Ստեփանոսեան Բախչիսարայցեանցի պսակը Գրիգոր Բախչիսարայցեանցի հետ. թոյլ տալով կնոջը կրկին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց Սուխումի շրջանի Ծիբելդա գիւղի ծխատեր Մկրտիչ քահանայ Մինասեանցին ապօրինի կնապահութեան և եկեղեցու գաւթում առանց թոյլտուութեան մեռելներ թաղելու համար 6 ամիս ժա-

ժամանակով դադարեցնել քահանայագործութիւնից և ուղարկել Սեան ապաշխարելու։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Փիր գիւղացի Սուլթան Ալլահվերդեանի պսակը Նաւասարդ Ալլահվերդեանի հետ, թոյլ տալով կնոջը Սուլթանին կրկին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Ղազախ գաւառի Աղաջուր գիւղի բնակիչ Աղաջան Աղինիանցի պսակը Հայկանուշ Աբրահամեանի հետ, տալով մարդուն միայն իրաւունք վերստին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Աղնախցի Նիկողայոս Փիրալեանցի պսակը Նադինկա Միքայէլեանի հետ, թոյլ տալով մարդուն միայն կրկին ամուսնանալու։

Յունիսի 12-ին Սինոդը որոշեց Նոր Բայազիտ գաւառի Ծարուխ գիւղի ծխատէր Յուսիկ քահանայ Տէր Խաչատրեանին իւր կռուարար և ապօրինի գործողութիւնների համար մի տարի ժամանակով դադարեցնել քահանայագործութիւնից և ուղարկել Սեան ապաշխարելու։

Յունիսի 16-ին Սինոդը որոշեց տալ Մայր Աթոռի միաբան դպիր Գալուստ Տէր Մկրտչեանին՝ ի նկատի ունենալով նրա հիւանդագին վիճակը, իւր խնդրանաց և Վեհ. Հայրապետի կրկին կոնդակների համաձայն ամսական 50 բուբլի փոխանակ 30-ի, սկսած ապրիլի 1-ից։

Յունիսի 19-ին Սինոդը որոշեց Բջնի գիւղի ծխատէր Գրիգոր քահանայ Տէր Ներսիսեանցին իւր ապօրինի և յանցաւոր ընթացքի համար անորոշ ժամանակով ուղարկել Սեան ապաշխարելու։

Նոյն թուին Սինոդը որոշեց ազատ համարել Սմբատ սարկաւագ Տէր Աւետիսեանին իւր խնդրի համաձայն կուսակրօն հոգևորականութեան կարգից ու կոչումից։

Յունիսի 21-ին Սինոդը որոշեց լուծել Տփխիսի թեմի Սնքար գիւղացի Թամամ Անտոնեանի պսակը Պողոս Գաբ-

բիէլեանի հետ, տալով իրաւունք միայն կնոջը կրկին ամուսնանալու վերամեայ եկեղեցական ապաշխարանքից յետոյ։

Յունիսի 23-ին Սինոդը որոշեց լուծել Դաւրիժեցի բաքուաբնակ Մարիամ Ստեփանեանի պսակը Ապրէս Հայրապետեան Բալայեանի հետ՝ վերջինիս անընդունակութեան պատճառով, թոյլ տալով կնոջը վերստին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Մատրասա գիւղացի Մաշոկ (Մարիամ) Աղասեանի պսակը Աղէքսանդր Ղարամեանցի հետ, թոյլ տալով կնոջը վերստին ամուսնանալու։

Յունիսի 26-ին Սինոդը որոշեց լուծել Ղարաբաղի թեմի Մալզ գիւղի բնակիչ Խաչի Դաւթեանցի պսակը Բէկուսի Հայրապետեանցի հետ, թոյլ տալով մարդուն Խաչին կրկին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Ասխաբադցի Խաչատուր Համբարձումեան Բարսեղեանի պսակը իւր Վարսենիկ կնոջ հետ, թոյլ տալով միայն մարդուն վերստին ամուսնանալու։

Յունիսի 28-ին Սինոդը որոշեց դատի յանձնել փաստաբան պ. Ենգիբարեանցի միջոցով «Ղլուի» կապալառու Սարիբէգ Աւագեանցին, պահանջելով նրանից 1903, 1904 և 1905 կապալադրամները՝ ընդամէնը 1263 ռուբլի։

Նոյն թուին Սինոդը որոշեց Շուշու գաւառի Վարազաբոյն գիւղի ծխատէր Իշխան քահանայ Տէր Յովհաննիսեանցին իւր անկանոն ընթացքի համար դադարեցնել քահանայագործութիւնից և ուղարկել Գանձասար միամեայ ժամանակով ապաշխարելու համար։

Յուլիսի 3-ին Սինոդը որոշեց լուծել Տփխիսեցի Շամիր Ղուկասեանի պսակը իւր կնոջ Օլինկա Սարգսեանի հետ, թոյլ տալով երկուսին էլ միամեայ եկեղեցական ապաշխարանքից յետոյ, վերստին ամուսնանալ։

Նոյն թուին Սինոդը որոշեց Անուոյ վանահայր Միքայէլ վարդ. Տէր Մինասեանից պահանջել նրա վատնած իններորդ ինն խալուար ցորենի (Բլնիի չտեմարանից) փոխարէն՝ խալուարը 20 ռուբլի հաշուելով, 1980 ռուբլի, որից պէտք է հանել 32 ռ. 40 կ. որ նա վճարել է հաշտարար միջնորդին «վասն ուստուգեալ գրամոտայի»—մնում է պահանջելի 1947 ռ. 60 կ։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Սարիղամիշի վերաբնակիչ Յարութիւն Ադայեանի պսակը Սրբուհի Ադայեանի հետ, թոյլ տալով միայն մարդուն կրկին ամուսնանալու.

Նոյն թուին Սինոդը որոշեց իւր փաստաբան պ. Ենգիբարեանի միջոցով «Փիւլթափայ»ի և «Խաթունարխի»ի արօտատեղի կապալառու Զոհրաբ Սարգսեանից ու Յովհաննէս Բաղալեանից պահանջել դատով 5702 ռուբլի ապառիկ վարձագրամը, իսկ Զոհրաբ Սարգսեանից 200 ռուբլի «Հնանափոս» վարելահողի ապառիկ վարձագրամը։

Յուլիսի 7-ին Սինոդը որոշեց տալ վանական կառավարութեան արտաքոյ նախահաշուի ճեմարանի նոր լուացարանի կառուցման համար առ այժմ 500 ռուբլի։

Նոյն թուին Սինոդը որոշեց իւր փաստաբան պ. Ենգիբարեանի միջոցով դատով պահանջել Փարաքարի այգու կապալառու Յարութիւն Մարուքեանից 330 ռուբլի ապառիկ վարձագրամները։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծել Շարուր Դարալագեազ գաւառի Սերս գիւղի բնակիչ Տիգրան Յովհաննիսեանի պսակը իւր կնոջ Ուստիանէ Յարութիւնեանի հետ, թոյլ տալով միայն մարդուն վերստին ամուսնանալ։